ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

LOGISTIC SUPPORT DEPARTMENT OF
MINISTRY OF DEFENCE OF THE
REPUBLIC OF ARMENIA

ДЕПАРТАМЕНТ МАТЕРИАЛЬНО-
ТЕХНИЧЕСКОГО ОБЕСПЕЧЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

0044, ք. Երևան, Բագրևանդի փ.5
E-mail: spitak151@rambler.ru
Հեռ. (+37410) 29-43-97
Ֆաքս (+37410) 29-46-13

5 Bagrevand str.,0044 Yerevan
Ереван, 0044, Багревандa 5
E-mail: spitak151@rambler.ru
Tel. Тел. (+37410) 29-43-97
Fax. Факс (+37410) 29-46-13

№ ԹՄԼՀ/26

«16» 01 2017 թ.

Անհատ ձեռնարկատեր
Գուրգեն Սողոմանյանին
ՀՎՀՀ՝ 57227548
ք. Գյումրի, Մուսայելյան փ.37
էլ. հասցեն՝ gurgen.soghomonyan@rambler.ru

ՀՀ պաշտպանության նախարարության և անհատ ձեռնարկատեր Գուրգեն Սողոմոնյանի միջև 17.05.2016թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-10/4-12 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) համաձայն վերջինս պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2016թ. մայիսից սեպտեմբեր ամիսների ընթացքում մատակարարել 100 հատ «Հայտարարությունների փակցման գրատախտակ (Փաստաթղթերի տախտակ 1.1x0.8 մ)» ապրանքատեսակը՝ 335,000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

Հաշվի առնելով այն համգամանքը, որ Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանի կողմից վերը նշված ապրանքատեսակից ոչ մի հատ չի մատակարարվել և հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.7 կետը, 3.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2017թ. հունվարի 11-ին միակողմանի, 100 հատ «Հայտարարությունների փակցման գրատախտակ (Փաստաթղթերի տախտակ 1.1x0.8 մ)» ապրանքատեսակի մասով (335,000 ՀՀ դրամ ընդհանուր գնով) լուծում է վերը նշված պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ անհատ ձեռնարկատեր Գուրգեն Սողոմոնյանը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 25,309.3 (քսանհինգ հազար երեք հարյուր ինը ամբողջ, երեք տասնորդական) ՀՀ դրամ՝ որպես պայմանագրով նախատեսված տույժ, ինչպես նաև տուժանք՝ 66,140 (վաթսունվեց հազար հարյուր քառասուն) ՀՀ դրամ՝ որպես պայմանագրի կատարման ապահովում (կնքված պայմանագրի ընդհանուր գումարի 10 %-ը)՝ 900005000758 հաշվեհամարին:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ